

ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ  
ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան, 2014թ.

ՀԱՍՏԱՎՈՐ Է

Հաշմանդամություն ունեցող անձանց  
հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի  
2014 թվականի թիվ ----- նիստով

Ազգային զեկույց

Հաշմանդամության ոլորտում տարվող սոցիալական քաղաքականությունը նպատակաուղղված է հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանությանը բոլոր բնագավառներում (իրավական, տնտեսական, շրջապատող միջավայր և այլն) հաշմանդամություն ունեցող անձանց համար հանրապետության մյուս քաղաքացիների հետ հավասար հնարավորությունների ապահովմանն ու կենսագործունեության բոլոր ոլորտներում հավասար պայմանների ստեղծմանը:

Հնարավորինս հավասար պայմաններ ստեղծելու համար միջավայրի մատչելիության ապահովման հետ զուգընթաց կարևոր է նաև լիարժեք կազմակերպել հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական, հոգեբանական, մասնագիտական վերականգնումը, ինչը կնպաստի հաշմանդամություն ունեցող անձանց կրթության, զբաղվածության և հասարակական ակտիվության գործընթացին:

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի /այսուհետ՝ Կոնվենցիա/ և «Հաշմանդամների իրավունքների և հասարակական կյանքում նրանց լիարժեք մասնակցության խթանման, հաշմանդամություն ունեցող անձանց կյանքի որակի բարելավման» 2006-2015 թթ. Եվրոխորհրդի գործողությունների ծրագրի դրույթներին համապատասխան, մշակվել և ՀՀ կառավարություն է ներկայացվել «Հայաստանի Հանրապետությունում Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը կարգավորում է հաշմանդամության սահմանման, հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական, բժշկական և մասնագիտական վերականգնման, հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի միջավայրի ապահովման, նրանց կրթության, աշխատանքային գործունեության, առողջության պահպանման, ինչպես նաև հասարակական կյանքում բոլորի հետ հավասար մասնակցության համար անհրաժեշտ սոցիալական, իրավական և տնտեսական նվազագույն երաշխիքների հետ կապված իրավահարաբերությունները:

ՀՀ կառավարության կողմից հավանության արժանանանալուց հետո նախագիծը ներկայացվել է ՀՀ Ազգային ժողով:

Մշակվել և ՀՀ կառավարություն է ներկայացվել «Անձի բազմակողմանի գնահատման՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպության ֆունկցիաների միջազգային դասակարգման սկզբունքների վրա հիմնված հաշմանդամության սահմանման մոդելի ներդրման հայեցակարգին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության արձանագրային որոշման նախագիծը: ՀՀ կառավարության կողմից նախագիծն արժանացել է հավանության և հաստատվել 2014 թվականի հունվարի 9-ի թիվ 1 արձանագրային որոշմամբ:

Մշակվել և ՀՀ կառավարություն է ներկայացվել «Հաշմանդամների սոցիալական պաշտպանության 2014 թվականի տարեկան ծրագրի և միջոցառումների ցանկի նախագծերին հավանություն տալու մասին» արձանագրային որոշման նախագիծը: Այն հաստատվել է ՀՀ կառավարության 2013 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 39-Ն արձագրային որոշմամբ:

Լսողության խնդիրներ ունեցող երեխաներին և երիտասարդներին լսողական սարքերը հավաստագրերի միջոցով ապահովելու գործընթացը կանոնակարգելու նպատակով ընդունվել են ՀՀ կառավարության 2013 թվականի հունվարի 10-ի թիվ 20-Ն և 2013 թվականի փետրվարի 14-ի թիվ 121-Ն որոշումները:

#### Վիճակագրությունը

Հաշմանդամություն ունեցող անձանց հանրապետական շտեմարանում 01.01.2013 թ. դրությամբ հաշվառված է եղել 186384 հաշմանդամություն ունեցող անձ, որից մինչև 18 տարեկան՝ 8078, կամ 6,1%-ը:

- |                                     |                     |
|-------------------------------------|---------------------|
| 1-ին խումբը՝ 11101                  | կամ 5,9%,           |
| 2-րդ խումբը՝ 86699                  | կամ 46,5%,          |
| 3-րդ խումբը՝ 80506                  | կամ 43,2%           |
| • աշխատունակ տարիքի (18-63)տարեկան՝ | 125321 ----- 67,2%, |
| • երիտասարդ (18-40)տարեկան՝         | 27424 ----- 14,7%,  |
| • 40-63 տարեկան՝                    | 97897 ----- 52,5%,  |
| • կենսաթոշակային տարիքի՝            | 52985 ----- 28%.    |

2014թ. հունվարի 1-ի դրությամբ վերը նշված շտեմարանում հաշվառված է 193836 հաշմանդամություն ունեցող անձ:

Հաշվետու տարում բժշկասոցիալական փորձաքննություն անցնելու նպատակով առողջապահական կազմակերպությունների կողմից ուղեգրվել է 17904 անձ: Առաջին անգամ հաշմանդամություն է ճանաչվել 16370 անձի մոտ: Նրանցից 784-ին սահմանվել է հաշմանդամության

1-ին խումբ, 5139-ին՝ 2-րդ խումբ, 9406-ին՝ 3-րդ խումբ, իսկ 1041-ին՝ «հաշմանդամ երեխա» կարգավիճակ:

Վերափորձաքննվել է 57578 անձ, որից 1189 հաշմանդամություն ունեցող անձ չեն ճանաչվել: Զինվորական ծառայության հետ կապված հաշմանդամություն ունեցող անձ է ճանաչվել 209 անձ:

Մշտապես իրականացվում են հաշմանդամություն ունեցող անձանց տվյալների տեղեկատվական համակարգի կատարելագործման և շահագործման աշխատանքները:

Պարբերաբար թարմացվում է ՀՀ ԱՍՀՆ և ՀՀ ԲՄՓ գործակալություն պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրված տեղեկատվությունը՝ ոլորտը կարգավորող իրավական ակտերի, տարեկան գործունեության հաշվետվությունների, ոլորտի վերաբերյալ քաղաքացիների կողմից հաճախ սրվող հարցերի ու դրանց պատասխանների վերաբերյալ:

#### Հաշմանդամություն ունեցող անձանց կրթության ապահովումը

Կրթությունը ներառում է մարդու կյանքի բոլոր փուլերը, այդ թվում նախադպրոցական, տարրական, միջնակարգ, բարձրագույն և մասնագիտական կրթությունը, ինչպես նաև կյանքի ողջ տևողությամբ ընթացող ուսուցումը:

Հիմնական կրթություն ստանալու հնարավորությունների ստեղծումը ոչ միայն նպաստավոր է հաշմանդամություն ունեցող անձանց համար, այլ նաև թույլ է տալիս հասարակության ոչ հաշմանդամություն չունեցող քաղաքացիներին ըմբռնել մարդկային բազմազանությունը:

Հանրապետությունում ներդնելով ներառական կրթության մոդելը կարևոր հանգամանք է հաշմանդամություն ունեցող անձանց համար: Այն պետք է լինի մատչելի, որակյալ և անվճար՝ տարրական ու միջնակարգ կրթությունը համայնքի այլ անդամների հետ հավասար հիմունքներով: Ընդհանուր կրթական համակարգում հաշմանդամություն ունեցող անձինք պետք է ստանան անհրաժեշտ աջակցություն՝ իրենց արդյունավետ ուսուցումն ապահովելու նպատակով, ձեռնարկվեն անհատական աջակցությանն ուղղված արդյունավետ միջոցներ այնպիսի միջավայրերում, որոնք ամբողջությամբ ներգրավելու նպատակն իրականացնելուն զուգահեռ նաև առավելագույնս կնպաստեն նրանց ուսումնական ու սոցիալական զարգացմանը:

ՀՀ կրթության և գիտության նախարարության, միջազգային ու տեղական կազմակերպությունների համագործակցության արդյունքում 2013 թվականին կրթության բնագավառում իրականացվել են տարբեր միջոցառումներ, որոնք նպատակաուղղված են եղել հաշմանդամություն ունեցող անձանց կրթական կարիքներին համապատասխան ուսումնական ծրագրերի մշակմանն ու նրանց կրթության առավել արդյունավետ կազմակերպմանը, ինտեգրմանը հասարակություն:

Հաշմանդամություն ունեցող անձանց կրթության և մասնագիտական ուսուցման ծրագրերի շրջանակներում հանրապետությունում իրականացվել են հետևյալ միջոցառումները՝

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար 115 ներառական կրթություն իրականացնող հանրակրթական դպրոցներում շուրջ 2600 երեխայի համար իրականացվել է ներառական կրթություն:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների 23 հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորել են շուրջ 2300 երեխաներ:

Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնի կողմից (ներառյալ մասնաճյուղերը) 2013 թվականի ընթացքում, նրանց կրթությունը կազմակերպելու նպատակով, իրականացվել է շուրջ 5000 երեխայի կրթական կարքիների գնահատում:

2013 թվականի ընթացքում, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման համար, մշակվել և տպագրվել է 11 անուն ուսումնամեթոդական ձեռնարկ և այլ ուսումնական նյութեր: Ուսումնաօժանդակ գրականություն է տրամադրվել հատուկ և ներառական կրթություն իրականացնող դպրոցներին:

2013-2014 ուս. տարվա ընդունելության ժամանակ միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատություններում առնվազն անցումային միավորներ հավաքած 1-ին և 2-րդ խմբի,

ինչպես նաև մինչև 18 տարեկան հաշմանդամություն ունեցող անձանց հատկացվել է անվճար ուսուցման հիմունքներով տեղեր:

#### Մատչելի միջավայրի ապահովումը

Հաշմանդամություն ունեցող անձանց անկախ ապրելու և կյանքի բոլոր բնագավառներում լիակատար մասնակցության հնարավորություն ընձեռնելու նպատակով պետությունը ձեռնարկում է համապատասխան միջոցներ, որպեսզի նրանց համար մյուսների հետ հավասար հիմունքներով ապահովվեն ֆիզիկական միջավայրի, փոխադարձաբարձրության, տեղեկատվության և հաղորդակցության, ներառյալ տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներն ու համակարգերը, ինչպես նաև այլ հարմարությունների ու ծառայությունների մատչելիությունը, որոնք հասանելի են հասարակությանը:

ՀՀ քաղաքաշինության նախարարությունը վերջին տարիներին ակտիվ մասնակցություն է ունեցել հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության օրենսդրական դաշտը կատարելագործելու և արդի պահանջներին համապատասխանեցնելու ուղղությամբ:

ՀՀ քաղաքաշինության նախարարությունը իրականացնում է հետևողական աշխատանքներ քաղաքաշինության ոլորտում, խնդրի վրա հատուկ ուշադրություն դարձնելու և հսկողություն սահմանելու նպատակով: Ելնելով դրանից Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի նիստերին պարբերաբար ներկայացվում է տեղեկատվություն այդ ուղղությամբ իրականացվող աշխատանքների վերաբերյալ:

ՀՀ քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական պետական տեսչության կողմից 2013 թվականի ընթացքում տարեկան ծրագրով նախատեսված տեսչական, ընթացիկ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության ստուգումների միջոցով, իրականացրել է վերահսկողություն հասարակական, արտադրական և բազմաբնակարան բնակելի շենքերի ճարտարապետահատակագծային առաջադրանքների կազմման, նախագծերի մշակման, փորձաքննության և դրանց համաձայնեցման փուլերում հաշմանդամություն ունեցող անձանց և բնակչության սակավաշարժ խմբերի համար սահմանված քաղաքաշինական նորմերի պահանջների կատարման նկատմամբ:

Տեսչական ստուգումներ են անցկացվել ՀՀ բոլոր մարզերում, ըստ անհրաժեշտության ստուգումներ են անցկացվել նաև մարզերի 14 համայնքներում:

Տեսչության պետի կողմից կայացված որոշումներով ՀՀ մարզպետներին առաջարկվել է հատուկ քննարկման առարկա դարձնել համայնքներում սահմանված կարգի խախտումով տրամադրված քաղաքաշինական փաստաթղթերի վերանայման հարցերը, իսկ համայնքների ղեկավարներին տրվել են պարտադիր կատարման ցուցումներ՝ արձանագրված խախտումները վերացնելու նպատակով: Քաղաքաշինական նորմերի պահանջների խախտումները կատարած մի շարք համայնքների ղեկավարների, կառուցապատողների և կապալառուների նկատմամբ սահմանվել են ֆինանսական տուգանքներ, տրվել են պարտադիր կատարման ցուցումներ՝ կասեցնել շինարարական աշխատանքները, ՃՀԱ-ներում և նախագծերում կատարել համապատասխան փոփոխություններ՝ թերությունները վերացնելու և թեքահարթակները կառուցելու նպատակով:

Հաշմանդամություն ունեցող անձանց հասարակական տրանսպորտով ապահովելու համար չափազանց կարևոր է տրանսպորտային ողջ համակարգի մատչելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար, սակայն հանրապետությունում հարմարեցված փոխադարձաբարձրության թիվը դեռևս շատ սահմանափակ է: Փոխադարձաբարձրության, կապի և հեռահաղորդակցման միջոցների բացակայության պատճառով հեռավոր մարզերի հաշմանդամություն ունեցող բնակիչները հիմնականում հնարավորություն չեն ունենում օգտվել բժշկական, վերականգնողական և այլ ծառայություններից:

2014 թվականի մարտի 26-ին կայացել է Հաշմանդամություն ունեցող անձանց ազգային հանձնաժողովի նիստ, որի ժամանակ ներկայացվել 2013 թվականի ընթացքում, հաշմանդամություն

ունեցող անձանց սոցիալական ներառման նպատակով, Երևանի քաղաքապետարանի և մարզպետարանների կողմից կատարված աշխատանքները:

Երևանի քաղաքապետարանի կողմից նախատեսվել է Հաշմանդամություն ունեցող անձանց սպասարկման համար նախատեսված սարքանքների /թեքահարթակների կամ հատուկ վերելակային հարմարանքների/ պատրաստում, ձեռքբերում և մայրաքաղաք ներկրված քաղաքային ավտոբուսների վրա դրանց տեղադրման աշխատանքների իրականացում:

Երևանի քաղաքապետարանի կողմից պարտադիր պայման է դրվել քաղաքային նշանակության քաղաքաշինական օբյեկտներում, կառուցվող շենքերում, փողոցներում, մայթերում թեքահարթակների կառուցում, հասարակական նշանակության բոլոր շինությունների նախագծման փուլում թեքահարթակների առկայությունը, շինությունները շահագործման կրնդունվեն միայն հասարակական կազմակերպությունների դրական վիզաների առկայության դեպքում:

Տեղաշարժման խնդիրներ ունեցող անձանց բուժսպասարկման ծառայությունների մատչելիության ապահովման նպատակով Երևանի բժշկական 19 պոլիկլինիկաներում կառուցվել են թեքահարթակներ:

2014թ. նախատեսվում է, 10 ավտոբուս հարմարեցնել տեղաշարժման խնդիրներ ունեցող անձանց կարիքներին, քննարկման փուլում է նաև սոցիալական տաքսի ծառայության գաղափարը:

2013 թ-ից Երևան քաղաքում գործունեություն է ծավալում Wheels On Wheels սոցիալական տաքսի ծառայությունը անվասայակով տեղաշարժվող անձանց հարմարեցված մեկ ավտոմեքենայով:

Հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի պայմաններ ապահովելու համար զգալի աշխատանքներ են իրականացնում նաև հասարակական կազմակերպությունները:

#### Զբաղվածության ապահովումը

Զբաղվածությունը հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման և ինքնուրույնության կարևոր տարրերից մեկն է: Զբաղվածության ցուցանիշը մեր երկրում, ցավոք, բավական ցածր է, չնայած ՀՀ գործող օրենսդրությունը պարունակում է դրույթներ, որոնք երաշխավորում են նրանց աշխատանքի իրավունքի ապահովումը: Հայաստանում հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության հիմնախնդիրը կարևորվում է պետական և ոչ պետական ինստիտուտների կողմից և դիտվում որպես գերակա խնդիր:

Վերջին երեք տարիներին զբաղվածության պետական կարգավորման բնագավառում մեկնարկել են համալիր բարեփոխումներ՝ քաղաքականության նոր մոդելի ներդրման անհրաժեշտությամբ պայմանավորված: Այս համատեքստում՝

2013թ. ՀՀ կառավարությունը հաստատել է «Զբաղվածության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հայեցակարգը:

Զբաղվածության ռազմավարության գերակա նպատակների իրականացման հիմնական մեխանիզմների ամբողջական և արդյունավետ օրենսդրական ապահովման նպատակով մշակվել և 2013թ. դեկտեմբերի 11-ին ՀՀ ԱԺ-ի կողմից ընդունվել է «Զբաղվածության մասին» ՀՀ նոր օրենքը (այսուհետ՝ օրենք), որը գործողության մեջ է մտել 2014թ. հունվարի 1-ից: Ընդ որում, համաձայն նշված օրենքի, հաշմանդամություն ունեցող անձը, եթե նա զբաղված չէ օրենքով սահմանված զբաղվածություն համարվող գործունեության որևէ տեսակով, ճանաչվում է գործազուրկ և ձեռք է բերում գործազուրկի համար օրենքով սահմանված իրավունքները: Նախկին կարգավորմամբ հաշմանդամություն ունեցող անձի համար նախատեսված էր «աշխատանք փնտրող չգրաված անձ» կարգավիճակը:

Հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության խթանման նպատակով օրենքով սահմանված է կազմակերպությունների համար, անկախ սեփականության ձևից, աշխատատեղերի պարտադիր ապահովման նորմատիվ (քվոտա):

Օրենքի 20-րդ հոդվածում նախատեսված քվոտայի չափաքանակների որոշման նպատակով իրականացվել են քվոտայի ներդրման ռիսկերի վերլուծություն, գնահատում: Նախագծով առաջարկվող քվոտային վերաբերող դրույթները քննարկվել են շահագրգիռ պետական և ոչ պետական

կազմակերպությունների հետ, այդ թվում՝ սոցիալական գործընկերության շրջանակներում: Արդյունքում, քվոտայի չափերի և ներդրման ժամկետների համաձայնեցված և ընդունելի տարբերակը ներառվել է Օրենքի նախագծում: Քվոտայի ներդրման արդյունքները գնահատելուց հետո հնարավոր կլինի քննարկել քվոտայի չափաքանակների ավելացման հարցը:

«Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության և նրա տարածքային կենտրոնների կողմից շարունակվել են աշխատանքները՝ հաշմանդամություն ունեցող անձանց մասնագիտական ուսուցման, աշխատանքային ունակությունների վերականգնման և նրանց աշխատանքի տեղավորման ուղղությամբ:

«Հաշմանդամների մասնագիտական ուսուցում, աշխատանքային ունակությունների վերականգնում» ծրագրում ընդգրկվել է 116 հաշմանդամություն ունեցող անձ:

«Ձեռնարկատիրական գործունեության պետական գրանցման համար գործազուրկներին և հաշմանդամներին պետական աջակցություն» ծրագրով ֆինանսական աջակցություն է ցուցաբերվել 10 անձի:

«Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման աջակցության նպատակով աշխատավարձի մասնակի փոխհատուցում գործատուին» ծրագրով ընդգրկվել է 156 հաշմանդամություն ունեցող անձ:

«Մասնագիտություն ունեցող, սակայն աշխատանքային փորձ չունեցող գործազուրկների և աշխատանք փնտրող չգրաված հաշմանդամների աշխատանքային պրակտիկայի կազմակերպումը գործատուի մոտ» ծրագրում ընդգրկվել է 5 հաշմանդամություն ունեցող անձ:

«Աշխատանք փնտրող չգրաված հաշմանդամների համար աշխատատեղերի հարմարեցումը գործատուի մոտ» ծրագրի շրջանակներում հարմարեցվել է 52 աշխատատեղ:

Իրականացվում են ծրագրեր և միջոցառումներ նաև միջազգային կազմակերպությունների հետ:

ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ «Մեյվ դը չիլդրեն»-ի «Ունիտն» ՀԿ-ի, Էյջ-Դի-Փի հիմնադրամի, «Լիարժեք կյանք» ՀԿ-ի և «Ակտիվա» միջազգային հիմնադրամ-ի կողմից իրականացվող «Հաշմանդամություն ունեցող անձանց կենսամակարդակի բարելավում զբաղվածության խթանման միջոցով» ծրագրի շրջանակներում ՀՀ ԱՄՀՆ ԶՊԾԳ Երևանի, Արարատի, Գեղարքունիքի, Լոռու և Շիրակի մարզերի բոլոր զբաղվածության կենտրոններին, ինչպես նաև Բժշկասոցիալական փորձաքննության երևանյան գրասենյակին տրամադրվել են անձի ֆիզիկական կարողությունների գնահատման սարքավորումներ (MAST տեստ), բոլոր կենտրոններում հաշմանդամություն ունեցող անձանց հետ աշխատող մասնագետները վերապատրաստվել են և անձի կարողությունների գնահատման և աշխատատեղի վերլուծության ուղղություններով:

Սակայն իրականացվող ծրագրերը դեռևս բավարար չեն լիովին լուծելու հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության հիմնախնդիրները: Դժվարություններ է առաջանում հատկապես նրանց աշխատանքային կարողությունների գնահատման, աշխատատեղերի հարմարեցման հարցերում:

«Հաշմանդամների մասնագիտական կողմնորոշման և աշխատանքային վերականգնողական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվել են աշխատանքներ հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքային ունակությունների վերականգնման, մասնագիտական կողմնորոշման և խորհրդատվական ծառայությունների տրամադրման նպատակով:

«Հաշմանդամների մասնագիտական կողմնորոշման և աշխատանքային վերականգնողական կենտրոն» 2013 թ. հունվարի 1-ից մինչև 2014 թ. հունվարի 1-ի դրությամբ կենտրոնի աշխատակիցները այցելել են 482 հաշմանդամություն ունեցող անձանց տուն, ուսումնասիրել են նրան ընտանեկան, սոցիալական, հոգեբանական վիճակը, բացահայտել հուզող առաջնահերթ խնդիրները ինչպես նաև իրականացվել են խորհրդատվական աշխատանքներ նրանց, նրանց ընտանիքի անդամների հետ: Նույն ընթացքում կենտրոն են այցելել 1170 հաշմանդամություն ունեցող անձ:

Կենտրոնում մասնագետները գրուցելով նրանց հետ, յուրաքանչյուրի համար կազմվել են անհատական միջնորդությունների պլան /կապված շահառուի այս կամ այլ սոցիալական խնդրի հետ/, նաև անհատական աշխատանքային վերականգնողական ծրագիր: Կենտրոն այցելած

հաշմանդամություն ունեցող անձանց մոտ 50%-ը այցելել է կենտրոն կրկնակի կամ բազմակի: Կենտրոնն ունի համապատասխան մասնագիտական գույքով կահավորված 4 ուսումնական սենյակներ՝ համակարգչային, կարի, վարսահարդարի, ծաղկի գեղարվեստական ձևավորման: Մասնագիտական խմբերի ղեկավարները հաշմանդամություն ունեցող անձիք են և ընտրվել են 2010թ.-ին կենտրոն հաճախող շահառուներից:

Աշխատանքի տեղավորման, մասնագիտական ուսուցման և կողմնորոշման հարցերի վերաբերյալ ծրագրեր են ներկայացնում նաև հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունները: Այդ ծրագրերն իրականացվում են պետական քաղաքականության ներքո, հաշվի առնելով նրանց առաջարկությունները և դիտորդությունները:

#### Հաշմանդամություն ունեցող անձանց բժշկական օգնությունն ու սպասարկումը

2013 թվականի ընթացքում շարունակվել է հաշմանդամություն ունեցող անձանց պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման կազմակերպումը՝ պետական նպատակային ծրագրերի շրջանակներում: Պետական պատվերի շրջանակներում կազմակերպվել է հաշմանդամություն ունեցող անձանց ամբուլատոր-պոլիկլինիկական, հիվանդանոցային, մասնագիտացված ստոմատոլոգիական, վերականգնողական (առողջարանային) բուժօգնությունը, հատուկ և դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների իրականացումը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունից դուրս բուժման ուղեգրման և ճանապարհածախսի փոխհատուցումը՝ ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի հունվարի 17-ի թիվ 30-Ա հրամանի համաձայն: Պետական պատվերի շրջանակներում իրականացվում է նաև հաշմանդամ երեխաների օրթեզավորումը և կորսետավորումը:

ՀՀ կառավարության 04.03.2004 թվականի N 318-Ն որոշմամբ հաստատված «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք ունեցող բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի» ցանկում ընդգրկված հաշմանդամություն ունեցող անձանց 2013 թվականի ընթացքում մատուցվել է հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում:

ՀՀ կառավարության 23.11.2006 թվականի N 1717-Ն որոշմամբ հաստատված «Անվճար և արտոնյալ պայմաններով դեղեր ձեռք բերելու իրավունք ունեցող բնակչության սոցիալական խմբերում» ընդգրկված հաշմանդամություն ունեցող անձանց կողմից 2013 թվականի ընթացքում անվճար և արտոնյալ պայմաններով դեղեր ձեռք բերելու իրավունքից ըստ դիմելիության օգտվել են հաշմանդամություն ունեցող 1-ին, 2-րդ խմբի և «հաշմանդամ երեխա» կարգավիճակ ունեցող անձինք անվճար, իսկ 3-րդ խմբինը՝ 50 տոկոս զեղչով:

Հանրապետությունում 2013 թվականին առողջարանային ուղեգրով ապահովվել է 1730 հաշմանդամություն ունեցող անձ:

#### Հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնումը

Հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնումն իր մեջ ներառում է բժշկական, մասնագիտական և սոցիալական միջոցառումների համակարգ, որն ուղղված է նրանց կենսագործունեության սահմանափակման վերացմանը կամ հնարավորինս փոխհատուցմանը: Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնումն իրականացվում է պետական պատվերի շրջանակներում և գործում են տարբեր ուղղվածության վերականգնողական ծառայություններ՝ հակատուբերկուլյոզային, նյարդահոգեբանական, սրտաբանական, բուժվերականգնողական, պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով և վերականգնման տեխնիկական միջոցներով ապահովման և այլն:

2013 թ. շարունակվել են հաշմանդամություն ունեցող անձանց բժշկական, սոցիալական և մասնագիտական վերականգնմանն ուղղված աշխատանքներ: Իրականացվել և համակարգվել են

Հաշմանդամների սոցիալական պաշտպանության 2013 թվականի տարեկան ծրագրով նախատեսված հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնման և պրոթեզաօրթոպեդիկ օգնության տրամադրման աշխատանքները:

2013 թվականի ընթացքում տրամադրվել է 12615 պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագա, որից՝ վերին և ստորին վերջույթների պրոթեզներ՝ 880, միոպրոթեզներ՝ 13 հատ, օրթեզներ՝ 333, սելմիրան՝ 683, աղեկապ՝ 249, սուպինատոր՝ 610, ռեկլինատոր՝ 15, հենակ՝ 1046, ձեռնափայտ՝ 483, օրթոպեդիկ կոշիկ՝ 1303.5, պրոթեզի կոշիկ՝ 1980, կրծագեղձի պրոթեզ՝ 642, գուլպաներ, ձեռնոցներ՝ 3140, սիլիկոնե գուլպա՝ 64 հատ, փոքր տրամաչափի սայլակ 5, քայլակ 153, կատարվել է պարագաների վերանորոգում՝ 682 հատ, ձայնաստեղծ սարք ստացել է 80 հաշմանդամություն ունեցող անձ, 130 հաշմանդամություն ունեցող անձի կատարվել է աչքի պրոթեզավորում:

Տրամադրվել են՝ 1210 լսողական սարք (որից՝ 108-ը եվրոպական արտադրության), 36 հավաստագիր՝ եվրոպական արտադրության լսողական սարքերի ձեռքբերման համար, լսողական սարքի ներդիրներ՝ 200 հատ /100 երեխա/, հաշմանդամի սայլակ՝ 373 հատ:

«Արաբկիր» ԲԿ-ի և «Հավատ» հ/կ-ի կողմից լսողության խնդիրներ ունեցող մինչև 12 տարեկան երեխաները ապահովվել են /OTIKON և SIEMENS ֆիրմաների լսողական սարքերով:

2013 թվականին «Բժշկասոցիալական վերականգնման ծառայություններ» և «Հոգեկան առողջության վերականգնման ծառայություններ» պետական նպատակային ծրագրերի շրջանակում «Արթմեդ» բժշկական վերականգնողական կենտրոնում բժշկասոցիալական և հոգեկան առողջության վերականգնման ծառայություն է ստացել 979 հիվանդ:

Հաշմանդամություն ունեցող անձանց բժշկական վերականգնումն իրականացվել է նաև բժշկական կազմակերպություններում:

Առողջության առաջնային պահպանման օղակում բուժօգնությունն անվճար է բնակչության բոլոր խմբերի՝ այդ թվում հաշմանդամություն ունեցող անձանց համար: Հաշմանդամություն ունեցող անձինք, պոլիկլինիկայի ուղեգրմամբ, օգտվում են դժվարամատչելի հետազոտություններից, հիվանդանոցային և ստոմատոլոգիական բուժօգնությունից: ՀՀ առողջապահության նախարարության, մարզպետարանների ու Երևանի քաղաքապետարանի ուղեգրերով նրանք օգտվում են առողջարանային վերականգնողական բուժումից:

«Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի համաձայն, «Հաշմանդամներին մատուցվող ծառայություններ» ծրագրի շրջանակում 2013 թվականից շարունակվել է իրականացվել ուշ տարիքում տեսողությունը կորցրած հաշմանդամություն ունեցող անձանց համար հատուկ տառատեսակներով գրքերի պատրաստման և «Խոսող գրքերի» ձայնագրության ծրագիրը, որի համար պետական բյուջեից հատկացվել է 10,5 մլն դրամ:

Տեսողության խնդիրներ ունեցող անձինք ապահովվել են բրայլյան գրքերով, տետրերով, «Խոսող գրքերով», իրականացվել է՝ 74400 թերթ չԿՄ օրգան ամենամսյա «Բյուլետեն»-ի և 42327 թերթ Բրայլյան գրքի տպագրություն, 320 հատ բրայլյան տետրի պատրաստում, «Խոսող գիրք» 1600 ժամ տևողությամբ ձայնագրում:

2013 թվականի տարեկան ծրագրով նախատեսված Տեսողությունից հաշմանդամություն ունեցող անձանց համար «Արև» համակարգի ուսուցում և համակարգչային տեխնիկայի տրամադրում /կետ՝ 6.4/ ծրագրի իրականացումը նպատակահարմար է համարվել և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի 18.07.2013թ. թիվ 101-Ս/ հրամանով վերապահվել է «Զբաղվածության պետական ծառայությանը»: Ծրագրի իրականացումն ապահովելու համար 10.10.2013 թվականին ընդունվել է ՀՀ կառավարության «Տեսողությունից 1-ին խմբի հաշմանդամություն ունեցող աշխատանք փնտրող չգբաղված անձանց ուսուցման և աշխատատեղի հարմարեցման շրջանակներում համակարգչի տրամադրման և Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի մարտի 6-ի թիվ 211-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1096-Ն որոշումը:

2013 թվականին տուն-ինտերնատներում և տնային պայմաններում իրականացվել է շուրջ 1045 հաշմանդամություն ունեցող անձանց խնամք և սոցիալական սպասարկում:



Վարդենիսի նյարդահոգեբուժական տուն-ինտերնատին կից հոգեկան առողջության ցերեկային կենտրոնում խնամքի և սոցիալական սպասարկման ծառայություններ են տրամադրվում շուրջ 20 հաշմանդամություն ունեցող անձանց:

Պատվիրակված ծառայությունների շրջանակներում «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի կողմից սպասարկվում են շուրջ 1350 հաշմանդամություն ունեցող անձ:

Պետության նպատակներն այս ոլորտում ուղղված են որակյալ, մասնագիտական և սոցիալական վերականգնողական գործընթացի կազմակերպման, ամրապնդման և ընդլայնման միջոցով հաշմանդամություն ունեցող անձանց համար իրենց կարիքներին համապատասխան վերականգնողական ծառայությունների ապահովմանը: Այնուամենայնիվ, հասարակության մեջ լիարժեք սոցիալական ինտեգրման համար առկա են մի շարք խնդիրներ: Բացակայում է վերականգնման միասնական համակարգը:

Հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնման ծառայությունները ապահովված չեն որակավորում ունեցող մասնագետներով, քանի որ ուսումնական հաստատությունները չեն պատրաստում բժիշկ-վերականգնողաբանի որակավորում ունեցող մասնագետներ: Վերաորակավորման և վերապատրաստման կրթական համակարգերը մատչելի չեն հաշմանդամություն ունեցող անձանց համար: Բացակայում է հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքային վերականգնման տարածքային կենտրոնների համակարգը:

#### Հաշմանդամություն ունեցող անձանց ինտեգրումը հասարակություն սպորտի միջոցով

Հաշմանդամություն ունեցող անձանց ինքնուրույնության, հասարակության մյուս անդամների հետ հավասար կյանք վարելու համար անհրաժեշտ է, որ նրանք ապրեն հնարավորինս լիարժեք կյանքով՝ շփվելով հասարակության լայն խավերի հետ: Հաշմանդամություն ունեցող անձանց համար կազմակերպվում և ապահովվում են տարբեր մարզաձևերից աշխարհի և ՀՀ առաջնությունների մասնակցությունը:

Հաշմանդամային սպորտի հարցերով զբաղվում են, ինչպես պետական մարմինները, այնպես էլ հասարակական կազմակերպությունները:

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերով զբաղվող նախարարության կողմից մշակվել և ՀՀ կառավարություն է ներկայացվել «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամային սպորտի զարգացման 2013-2017 թվականների ծրագիրը և միջոցառումների ցանկը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը:

«Հաշմանդամային սպորտին առնչվող ծառայություններ» ծրագրով, ներքոնշյալ չորս հասարակական կազմակերպությունների ցուցաբերվել է պետական աջակցություն և ՀՀ պետական բյուջեից հատկացվել 9.000.000 ՀՀ դրամ, իրականացված միջոցառումներին մասնակցել են 328 հաշմանդամություն ունեցող մարզիկ՝

- «Հայաստանի ազգային պարաօլիմպիկ կոմիտե» ՀԿ-ն
- «Խուլերի հայկական սպորտային կոմիտե» ՀԿ-ն
- «Հայաստանի կույրերի միավորում» ՀԿ-ն
- «Հայկական Հատուկ Օլիմպիականներ» ՀԿ-ն:

«Հաշմանդամային սպորտին առնչվող ծառայություններ» ծրագրով:

Բուլղարիայի Սոֆիա քաղաքում խուլերի ամառային օլիմպիականի մասնակցել են լսողության խնդիրներով 5 մարզիկ, նվաճել են բրոնզե մեդալ:

Հաշմանդամություն ունեցող և հատուկ կարիքներով սոցիալապես անապահով 614 երեխաների համար իրականացրել է Երևանի, Լոռու, Շիրակի և Գեղարքունիքի մարզերի մասնաճյուղերում գեղագիտական, արհեստագործության անվճար ուսուցման ծրագրեր,

Լոռու և Շիրակի մարզերում «Ընտանեկան գրադարանավար» ծրագրի շրջանակներում հաշմանդամություն ունեցող 1567 անձանց համար տնային պայմաններում իրականացվել է գրադարանային սպասարկում:

Երևանում անցկացվել է բակային սպարտակիադա՝ 2 փուլով, ըստ տարիքային խմբերի, կազմակերպվել է հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների ձեռքի աշխատանքների, գեղանկարների ցուցահանդես, լավագույն մասնակիցները խրախուսվել և պարգևատրվել են, կազմակերպվել են հաշմանդամություն ունեցող երեխաների այցելություններ Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող մշակութային կազմակերպություններ:

Հայաստանի հաշմանդամների «Փյունիկ» միության ջանքերով 2013թ հունիսի 9-11-ը կազմակերպել է հաշմանդամային սպորտի 11-րդ հանրապետական փառատոնը, որին մասնակցել են շուրջ 100 հաշմանդամ Հայաստանի տարբեր մարզերից, ինչպես նաև իրականացրել է «Մենք տարբեր ենք, բայց մենք կարող ենք» ծրագիրը, որի շրջանակներում համագործակցել է վրացական ANSF կազմակերպության հետ և կազմակերպել հայ և վրացի հաշմանդամություն ունեցող անձանց ցուցահանդեսներ՝ Երևանում և Թբիլիսիում:

#### Սոցիալական գործընկերություն հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերով զբաղվող պետական և ոչ պետական կազմակերպությունների միջև

Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանվածությունը բարձրացնելու և առկա հիմնախնդիրների լուծման նկատմամբ համալիր մոտեցում ապահովելու նպատակով՝ սոցիալական ուղղվածության ծրագրեր իրականացնելիս ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ինչպես նաև այլ նախարարություններն ու գերատեսչությունները հաջողությամբ համագործակցում են հասարակական կազմակերպությունների և տեղական ինքնակառավարման մարմինների հետ:

Հայաստանի Հանրապետությունում գործում են հաշմանդամության հիմնահարցերով զբաղվող մի քանի տասնյակ կազմակերպություններ: Իրենց ակտիվ գործունեությամբ հանրապետության սոցիալական դաշտում իրենց ուրույն տեղն ունեն և կայացած ու ճանաչված են «Հաշմանդամություն ունեցող անձանց շահերի պաշտպանություն ազգային դաշինք» իրավաբանական անձանց միությունը, Հայաստանի հաշմանդամների «Փյունիկ» միությունը, «Փարոս», «Հայաստանի կույրերի միավորում», «Ունիտոն», «Հայաստանի խուլերի միավորում», «Հույսի կամուրջ», «Հավատ», «Աստղիկ» «Հաշմանդամ երեխաների ծնողների միությունը», «Փրկություն», «Հավատ», «Կամք և կորով», «Աստղացույց», «Լիարժեք կյանք» և այլ հասարակական կազմակերպությունները:

«Հաշմանդամություն ունեցող անձանց շահերի պաշտպանություն ազգային դաշինք» թվով 22 իրավաբանական անձանց միությունը, որի նպատակն է պաշտպանել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներն ու արժանապատվությունը և խթանել դրանց իրականացման համար անհրաժեշտ հավասար հնարավորությունների և պայմանների ստեղծումը, 2013 թվականի ընթացքում իրականացրել է 12 լայնածավալ քարոզարշավներ Երևանում և բոլոր մարզերում՝ ուղղված հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց ընտանիքների հիմնախնդիրների մասին իրազեկության բարձրացմանը, նրանց իրավունքների պաշտպանությանը և ՄԱԿ-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության մասին» կոնվենցիայով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների կատարման նկատմամբ պետական կառավարման և օրենսդիր մարմինների պատասխանատվության բարձրացմանը և կոնվենցիայի դրույթների իրականացմանը Հայաստանում:

2007թ. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը համագործակցում է «Հայաստանի կույրերի միավորում» հասարակական կազմակերպության հետ: ՀՀ պետական աջակցություն է ցուցաբերվում միավորման «Հրատարակչություն» ՄՊԸ-ին՝ ուշ տարիքում տեսողությունը կորցրած հաշմանդամություն ունեցող անձանց համար հատուկ տառատեսակներով

/Բրայլի համակարգով/ գրքերի, տետրերի և ամսագրերի տպագրության, ինչպես նաև «Խոսող գրքերի» ձայնագրության համար:

Կարևորելով մտավոր խնդիրներ ունեցող մարդկանց վերականգնումը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից պետական աջակցություն է ցուցաբերվում «Փրկություն» Հ/Կ-ին՝ փոխհատուցելով 24 աշխատակիցների աշխատավարձը: Կենտրոնի հիմնական նպատակը մտավոր խնդիրներ ունեցող պատանիների և երիտասարդների ու նրանց ընտանիքների սոցիալական, կրթական և առողջապահական հիմնախնդիրների լուծման միջոցով նրանց ինտեգրումն է հասարակություն: «Փրկություն» հասարակական կազմակերպություն են հաճախում Երևան քաղաքի տարբեր համայնքներից՝ 13-35 տարեկան 50 շահառուներ, որոնց թվում կան զուգակցված խնդիրներ ունեցողներ: Կենտրոնի ծառայություններից ամսվա ընթացքում պարբերաբար օգտվում են ևս 11 շահառու:

Հաշմանդամություն ունեցող անձանց հասարակություն ինտեգրելու գործում՝ Հայաստանի հաշմանդամների «Փյունիկ» միությունը 2013թ. իրականացրել է մի շարք ծրագրեր, այդ թվում նաև վերականգնողական ծրագրեր՝ «Անվճար սայլակների առաքելություն» կազմակերպության կողմից ուղարկված 423 հաշմանդամային սայլակների բաշխման գործընթացի իրականացում: 2004 թվականից ի վեր կազմակերպությունում գործում է սայլակների հավաքման և վերանորոգման արհեստանոց, որտեղ 2013թ-ին վերանորոգվել են նաև պետության կողմից հատկացված, կամ այլ տեղերից ձեռք բերված վնասված սայլակները:

Հաշմանդամների «Փյունիկ» միությունը Երևանի քաղաքապետարանի հետ համատեղ, քաղաքապետարանին հարող այգու տարածքում 4 մարզաձևերից իրականացրել է մարզական միջոցառում, որին մասնակցել են հաշմանդամություն ունեցող 60 մարդ իսկ 2013թ հուլիսի 10-ից մինչև օգոստոսի 10-ը ՀՀ նախագահական ֆոնդի աջակցությամբ հաշմանդամների «Փյունիկ» միությունը կազմակերպել է ամառային ճամբար, որին մասնակցել են 90 հաշմանդամ երեխաներ և երիտասարդներ ամբողջ Հայաստանի տարածքից:

«Հուլիսի կամուրջ» հաշմանդամ երեխաների և երիտասարդների իրավունքների պաշտպանության հասարակական կազմակերպությունը 2013 թվականին իրականացրել է մի շարք ծրագրեր, խթանելու.

1. հաշմանդամություն ունեցող անձանց կողմից իրենց իրավունքների իրացումն ու սոցիալական ներառումը,
2. հաշմանդամության սոցիալական մոդելի ամրապնդումը հասարակական կյանքի տարբեր ոլորտներում,
3. սոցիալ-հոգեբանական և մանկավարժական ծառայությունների հասանելիությունը:

<<Հուլիսի կամուրջ>> ՀԿ-ն 2013թ. հուլիսից սկսել է <<Աշխատանքի և արժանապատիվ կյանքի իրավունք>> եռամյա ծրագրի իրականացումը, որը նպատակ ունի նպաստել հաշմանդամություն ունեցող երիտասարդների կենսապայմանների բարելավմանն ու հզոր քաղաքացիական հասարակության կերտմանը ՀՀ Տավուշի մարզի 4 քաղաքային և 4 գյուղական համայնքներում: Տավուշի մարզի 8 ՄԿՈՒ հաստատությունների 80 ուսուցիչների մոտ իրականացվել է ներառական մասնագիտական ուսուցում և կրթություն կազմակերպելու համար անհրաժեշտ գիտելիքների և կարողությունների գնահատում, որի արդյունքում մասնագետների կողմից մշակվել է Ներառական մասնագիտական կրթության հարցերով ուսուցիչների երկշաբաթյա վերապատրաստման փաթեթ: Իրականացվել է նաև աշխատաշուկայի պահանջարկի ուսումնասիրություն մարզի գործատուների շրջանում: Հաջորդ տարվա ընթացքում կիրականացվի նաև մասնագիտական կարողությունների գնահատում ծրագրի թիրախ 120 հաշմանդամություն ունեցող երիտասարդների մոտ: Մարզի 4 քաղաքային համայնքներից յուրաքանչյուրում ստեղծվել են Քաղաքացիական գործընկերության հարթակները, որոնք շարունակաբար տեղեկատվություն կտարածեն մասնագիտական ուսուցման և զբաղվածության հնարավորությունների վերաբերյալ, ինչպես նաև իրար կկապեն արդեն գործող տարբեր ծրագրեր՝ միասնական նպատակի հասնելու համար: Ծրագրի շրջանակում 2013 թվականի ընթացքում թվով 120 հաշմանդամություն ունեցող երիտասարդի և նրանց ընտանիքների 360

անդամների համար կազմակերպվել են տարբեր վերապատրաստումներ՝ բարձրացնելու նրանց իրազեկվածությունը իրենց իրավունքների /մասնավորապես կրթության և աշխատանքի/ մասին և զարգացնելու անհրաժեշտ գիտելիքների և կարողությունների՝ պայքարելու իրենց կրթության և աշխատանքի իրավունքների լիիրավ իրացման և արժանապատիվ կյանքով ապրելու համար: Այս նպատակով Բերդ, Նոյեմբերյան, Դիլիջան և Իջևան համայնքներում ստեղծվել են հաշմանդամություն ունեցող երիտասարդների շահերի պաշտպանության խմբեր, որոնք կառաջնորդեն իրենց իրավունքների և շահերի պաշտպանության ակցիաները և քարոզարշավները:

2013թ. հուլիսից <<Հուլիսի կամուրջ>> ՀԿ-ն սկսել է <<Լսելի դարձնել հաշմանդամության ձայնը. Հզորացնել նրանց իրավունքների և շահերի պաշտպանությունը Հայաստանում>> երկամյա ծրագրի իրականացումը, որը նպատակ ունի հզորացնել հաշմանդամություն ունեցող անձանց շարժումը Հայաստանում, ի նպաստ հաշմանդամություն ունեցող անձանց հավասար իրավունքների ու հավասար հնարավորությունների խթանմանը՝ ինքնուրույն ապրելու, աշխատանքի, կրթության և սեփական որոշումներ կայացնելու համար:

«Հուլիսի կամուրջ» հասարակական կազմակերպության և ՄԱԿ-ի Մանկակական հիմնադրամի աջակցությամբ հրավիրված միջազգային փորձագետների հետ համատեղ մշակվել են ԱՀԿ Ֆունկցիաների միջազգային դասակարգման (ICF-CY) հիման վրա երեխաների ֆունկցիոնալ գնահատման գործիքակազմը և մեթոդաբանությունը: Ծրագրի գործընկերներ՝ Երևանի «Հենաշարժողական խնդիրներ ունեցող երեխաների» թիվ 17 հատուկ դպրոցի, Երևանի թիվ 135 և թիվ 197 հիմնական դպրոցների և թիվ 101 և 109 մանկապարտեզների թվով 53 ուսուցիչներ անցել են խորը վերապատրաստում՝ ներառական կրթության և Առուջապահության համաշխարհային հազմակերպության «Ֆունկցիաների միջազգային դասակարգման» հիման վրա կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի համապարփակ գնահատման թեմաներով, 190 ժամ տևողությամբ: Բոլոր 5 կրթական հաստատություններում ստեղծվել և համապատասխան դիդակտիկ նյութերով և խաղալիքներով, տեխնիկայով ու կահույքով հագեցվել են գնահատման ռեսուրս սենյակները: Ծրագրի շրջանակում մշակվել են մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի հայեցակարգը, կանոնադրությունը, մանկավարժահոգեբանական աջակցության տրամադրման կարգը և չափորոշիչները, որոնք գործիքների վալիդացիայի արդյունքում կրամշակվեն և կհաստատվեն ՀՀ ԿԳՆ կողմից:

«Հուլիսի կամուրջ» հասարակական կազմակերպությունը ծրագրի շրջանակներում բարձրացրել է համայնքների իրազեկվածությունը հաշմանդամություն և այլ սոցիալ հոգեբանական և կրթական կարիքներ ունեցող երեխաների խնդիրների մասին և հասնել նրանց լիիրավ մասնակցությանը համայնքի կյանքին՝ ներառական մոտեցումների ամրապնդման և ընտանիք-համայնք սերտ համագործակցության միջոցով: Ծրագրի աջակցությամբ Բերդ, Նոյեմբերյան, Դիլիջան և Իջևան քաղաքների քաղաքապետերին կից ստեղծվել են Երեխաների իրավունքների պաշտպանության հարցերով զբաղվող հանձնաժողովներ՝ աջակցելու համայնքների ավագանիների անդամներին և ղեկավարներին մշակելու համայնքի զարգացման ծրագրեր, որոնք ներառական են և երեխաների խնդիրների լուծմանը մոտենում են երեխայի իրավունքների տեսանկյունից: 2013 թվականին, ծրագրի շրջանակում, «Իրավունքի վրա հիմնված և ներառական մոտեցումներ» թեմաներով վերապատրաստումներ են կազմակերպվել ՏԻՄ-երի աշխատակիցների, 15 դպրոցների մանկավարժների, 4 հասարակական կազմակերպությունների անդամների և 200 ընտանիքների անդամների համար: Իրականացվել են շուրջ 18 իրազեկման բարձրացման միջոցառումներ: Մանրամասնությունները <http://childbridgeofhope.blogspot.com> կայքում:

«Հուլիսի կամուրջ» հասարակական կազմակերպության ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան, Իջևան, Բերդ և Նոյեմբերյան քաղաքների երեխաների զարգացման չորս ցերեկային կենտրոնները ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ՏԻՄ-երի և այլ միջազգային կառույցների ֆինանսական աջակցությամբ 2013թ-ի ընթացքում սոցիալ-հոգեբանական, վերականգնողական և հատուկ մանկավարժական ծառայություններ է մատուցել մարզի շուրջ 964 երեխաների (այդ թվում 580 հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող) և նրանց ընտանիքի անդամների:

«Հուլիսի կամուրջ» հասարակական կազմակերպության 2013 թվականին իրականացրել է հանրային իրազեկության բարձրացման մի շարք միջոցառումներ, որոնց նպատակն է եղել հաշմանդամություն ունեցող անձանց խնդիրների բարձրաձայնումը և այդ խնդիրների լուծմանն անհրաժեշտ հավասար հնարավորությունների ստեղծումը:

2013 թվականին «Ունիսոն» ՀԿ, «Էյջ-Դի-Փի» հիմնադրամի և «Լիարժեք կյանք» ՀԿ հետ համագործակցությամբ «Սեյվ դը չիլդրեն» կազմակերպության կողմից իրականացվող «Հաշմանդամություն ունեցող անձանց կենսամակարդակի բարելավում գրադվածության խթանման միջոցով (LIFE)» ծրագրի իրականացման արդյունքում զգալի առաջընթաց է նկատվել միջին մասնագիտական կրթության բնագավառում: Հաշմանդամություն ունեցող ավելի քան 500 երիտասարդներ ստացել են կարճաժամկետ մասնագիտական կրթություն, իսկ 101-ը ընդգրկվել են միջին մասնագիտական/արհեստագործական կրթական հաստատությունների երկարաժամկետ ծրագրերում: Նույն ծրագրի շրջանակներում ներառական կրթական միջավայր ապահովելու նպատակով վերապատրաստվել է միջին մասնագիտական / արհեստագործական կրթական հաստատությունների ավելի քան 800 ուսուցիչ, մշակվել և հրատարակվել է հաշմանդամություն ունեցող անձանց հետ աշխատելու ձեռնարկ՝ նախնական/արհեստագործական և միջին մասնագիտական հաստատությունների դասավանդողների համար, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց հետ հաղորդակցման սկզբունքների մասին բուկլետ ՄԿՈԻ ուսանողների և այլ երիտասարդների շրջանում տարածելու նպատակով:

LIFE ծրագրի շրջանակներում «Ունիսոն» ՀԿ, «Էյջ-Դի-Փի» հիմնադրամի և «Լիարժեք կյանք» ՀԿ –ի կողմից իրականացվել է «Կյանքի հմտությունների և աշխատանքի պատրաստվածության» դասընթաց, որին անվճար հիմունքներով մասնակցել է ավելի քան 300 հաշմանդամություն ունեցող անձ, իսկ «Ունիսոն» ՀԿ-ն հատուկ համակարգչային ծրագրով դասընթացներ է կազմակերպել նաև տեսողական խնդիրներով հաշմանդամություն ունեցող անձանց համար:

Նույն ծրագրի շրջանակներում Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոնի և Տաթև-95 հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվել է գիշերօթիկ և հատուկ դպրոցների ավելի քան 200 սաների մասնակցությունը մասնագիտական կողմնորոշման միջոցառումներին:

2013 թվականին Սեյվ դը չիլդրենի/LIFE ծրագրի և Միգրացիայի միջազգային կազմակերպության կողմից Ավստրիայի Զարգացման Գործակալության ֆինանսավորմամբ իրականացվող «Հարավային Կովկասում ականներից տուժածների սոցիալ-տնտեսական վերաինտեգրում» ծրագրի շրջանակներում իրականացվել է «Հաշմանդամություն ունեցող անձանց գրադվածությունը Հայաստանում. կարիքներ և խոչընդոտներ» որակական հետազոտություն, որի արդյունքները ներկայացվել են լայն հասարակության ու համապատասխան գերատեսչությունների ուշադրությանը:

Հաշմանդամություն ունեցող անձանց աշխատաքային իրավունքի և կարողությունների վերաբերյալ հանրության իրազեկության բարձրացման նպատակով LIFE ծրագրի գործընկեր կազմակերպությունների՝ «Ունիսոն» ՀԿ, «Էյջ-Դի-Փի» հիմնադրամի և «Լիարժեք կյանք» ՀԿ –ի կողմից կազմակերպվել է ֆոտո ցուցահանդես, ստեղծվել են սոցիալական տեսահոլովակներ և կազմակերպվել է երկու համապետական քարոզարշավ:

LIFE ծրագրի շրջանակներում աշխատանք է տարվել նաև գործատուների շրջանում՝ Ավելի քան 350 գործատու մասնակցել է LIFE գործընկեր կազմակերպությունների կողմից հրավիրված ՀՈԻԱ գրադվածության հարցերով քննարկումներին և դասընթացներին, ստեղծվել է «Հաշմանդամություն ունեցող անձանց աշխատատեղի հարմարեցման» ձեռնարկ, իսկ նույն ծրագրի շրջանակներում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության, ՀՀ ԱՍՀՆ «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության, «ՎիվաՍել-ՄՍՍ» և «ԱրմենՏել» հեռահաղորդակցային ընկերությունների, Յունիբանկ և Էյջ-Էս-Բի-Սի բանկերի, «Տոսպ» տրիկոտաժի ֆաբրիկան, ՄՌ Ասոցիացիան և LIFE ծրագրի գործընկեր կազմակերպությունների ներկայացուցիչներից ստեղծված աշխատանքային խմբի կողմից ստեղծվել է «Հաշմանդամություն ունեցող անձանց աշխատավայրում ներառմանն ուղղված ձեռնարկ»:

LIFE ծրագիրն ապահովել նաև է 545 հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությունը ՀՀ ԱՍՀՆ ԶՊԾԳ-ի կողմից Վանաձորում, Գյումրիում, Արտաշատում և ծրագրի գործընկեր «Ունիսոն» ՀԿ-ի կողմից Երևանում հաշմանդամություն ունեցող անձանց համար կազմակերպված աշխատանքի տոնավաճառներին:

Հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածությունը ապահովելու նպատակով LIFE ծրագրի շրջանակներում հասարակական կազմակերպությունների, բիզնես կառույցների և Վանաձորի քաղաքապետարանի հետ համագործակցությամբ 2013թ. ստեղծվել է 14 սոցիալական ձեռնարկություն:

2013թ. նախագահական ընտրությունների ընթացքում Կազմակերպությունն իրականացրել է ընտրատեղամասերի մատչելիության մոնիտորինգ և ընտրությունների դիտորդություն, որի արդյունքում բացահայտվել է, որ Երևանի ընտրատեղամասերից ընդամենը 31-ն (6%) են մատչելի անվասայլակներով ընտրողների համար:

Երևանի քաղաքապետարանի հայցով 2013թ. դեկտեմբերին Կազմակերպությունն իրականացրել է Երևանի փողոցների և համաբուժարանների մատչելիության դիտարկում: Արդյունքում կազմվել է վերակառուցում պահանջող 36 տեղայնացումների ցուցակ, որոնցից 11-ը ներառվել են 2014թ.-ին Երևանի քաղաքապետարանի կողմից նախատեսված թեքահարթակների կառուցման նախագծի մեջ, իսկ մնացածները հաշվի կառնվեն հետագա աշխատանքների ժամանակ:

Մատչելիության ապահովման նպատակով Կազմակերպությունը խորհրդատվություն է տրամադրել նաև մասնավոր սեկտորին՝ Էրեբունի բիզնես կենտրոնին, Էլիտ պլազային և մի շարք այլ հյուրանոցների և հաստատությունների:

Ամբողջ տարվա ընթացքում անցկացվել է կերպարվեստի ստուդիայի դասընթացներ, որոնց մասնակցել են հաշմանդամություն ունեցող երիտասարդներ (հիմնականում՝ մտավոր հետամնացություն ունեցող):

«Փարոս» երգչախումբը, որում ընդգրկված են 15 սայլակավոր, 3 կույր և 7 այլ տեսակի հաշմանդամություն ունեցող երգիչներ, բազմաթիվ ելույթներ են ունեցել Երևանի «Արամ Խաչատրյան» մեծ համերգասրահում, Ա.Սպենդարյանի անվ. օպերային թատրոնում և այլն:

Թեև փոքր տպաքանակով, բայց 2013-ին ևս եռամսյակը մեկ շարունակել է լույս տեսնել «Լիարժեք կյանք» լրատուն, որի էջերում զետեղվել են նյութեր՝ ոլորտում տեղի ունեցող գործընթացների և հաջողությունների մասին, մշտապես գործել է ստեղծագործողի անկյուն, հաջողված պատմություն, հաշմանդամային սպորտ և այլ խորագրեր: Ավանդույթի համաձայն՝ տարեվերջին ամփոփվել է «Հաջողված պատմություն» հրապարակումների մրցույթը, մրցանակային տեղեր զբաղեցրած անձինք ստացել են մրցանակներ:

Հաշվետու տարում շարունակել է գործել անվճար թեժ հեռախոսագիծը:

2013 թվականի օգոստոսի 4-27-ը գործել է ներառական ճամբարը՝ հաշմանդամություն ունեցող և չունեցող երեխաների համար՝ 3 հերթափոխով՝ յուրաքանչյուրը 7-օրյա տևողությամբ: Ճամբարում հանգստացել է 98 հաշմանդամություն ունեցող երեխա:

2013 թվականին «Լիարժեք կյանք» ՀԿ-ն շարունակել է ակտիվ մասնակցությունը մարզական միջոցառումներին: Հոկտեմբերի 3-7-ը կազմակերպությունը ԼՂՀ մայրաքաղաք Ստեփանակերտում մասնակցել է հաշմանդամություն ունեցող երիտասարդների ԼՂՀ Բոչիայի 3-րդ Բաց Առաջնությանը՝ գրավելով 3-րդ պատվավոր հորիզոնականը:

## Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողով

Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) կոչված է հաշմանդամություն ունեցող անձանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման գործընթացը համակարգելու, կանոնակարգելու և վերահսկելու, ինչպես նաև պետական և ոչ պետական կազմակերպությունների աշխատանքներն ավելի համակարգված դարձնելու:

Հանձնաժողովը 2013թ. ընկած ժամանակահատվածում անցկացված նիստում քննարկել է հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրներին վերաբերվող մի շարք հարցեր, այդ թվում՝ նաև իրավական ակտերի նախագծեր:

Համաձայն ՀՀ վարչապետի 2008թ. N98-Ն որոշման 3-րդ հոդվածի 11-րդ կետի՝ Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի 2014 թվականի մարտի 26-ին կայացած նիստի ընթացքում ներկայացվել է Երևան /քաղաքի/ հանձնաժողովի և մարզային հանձնաժողովների կողմից 2013թ. ընթացքում կատարած աշխատանքների հաշվետվությունները:

Նիստին հակիրճ ներկայացվեց «Անձի բազմակողմանի գնահատման» ֆունկցիաների միջազգային դասակարգման սկզբունքների վրա հիմնված հաշմանդամության սահմանման մոդելի ներդրման» հայեցակարգի իրականացման ընթացքը:

Մարզային հանձնաժողովների նախագահները ներկայացրեցին կատարված աշխատանքները, խնդիրները: Պետք է նշել, որ խնդիրները, չնչին տարբերություններով, միատեսակ են համարյա բոլոր մարզերում: Բոլոր զեկուցողները նշեցին հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ վերաբերմունքի դրական փոփոխության, հասարակական կազմակերպությունների աճող ակտիվության, խնդիրները համատեղ լուծելու անհրաժեշտության մասին:

Նիստի քննարկմանը ներկայացվել է առաջարկություն՝ նախատեսել շրջակա միջավայրի ունիվերսալ դիզայնի պարտադիր նորմեր սահմանելու և եղած խնդիրներին օրենսդրական լուծումներ տալու վերաբերյալ:

Մարզային հանձնաժողովները նշեցին, որ արձանագրվել են ձեռքբերումներ վերականգնողական և ցերեկային խնամքի կենտրոնների ստեղծման, հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ վերաբերմունքի փոփոխության հարցերում: Ակտիվացել է համագործակցությունը ոլորտում գործող հասարակական կազմակերպությունների հետ, արդյունքում կազմակերպվել են բազմաթիվ միջոցառումներ: Այս ամենի հետ մեկտեղ կան նաև շատ չլուծված հարցեր՝ մասնավորապես շրջակա միջավայրի մատչելիության և հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության հետ կապված խնդիրներում:

Առաջարկվեց մարզային հանձնաժողովի անդամներին, որպեսզի իրենց մարզերում կատարեն պետական և ոչ պետական մարմինների կողմից իրականացվող ծառայությունների քարտեզագրում՝ ըստ ոլորտների և տեղեկատվություն ներկայացնեն նախարարություն:

Ամփոփելով օրակարգում ներկայացված հարցերը, Երևան քաղաքի հանձնաժողովի նախագահի և մարզային հանձնաժողովների նախագահների կողմից ներկայացրած հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառմանն ուղղված՝ 2013թ. ընթացքում կատարած աշխատանքների մասին հաշվետվությունները Ազգային հանձնաժողովի կողմից ընդունվեց ի գիտություն:

Հանձնաժողովի նախագահի կողմից հանձնարարվեց ներկայացնել առաջարկություններ և մշակել ծրագրեր նիստի ընթացքում բարձացված հարցերի վերաբերյալ:

2013թ. Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովների կողմից հաշմանդամների համար հավասար հնարավորություններ ապահովելու ուղղությամբ կատարված աշխատանքները ուսումնասիրելու և մեթոդական օգնություն տրամադրելու, ինչպես նաև մարզի քաղաքային համայնքների հասարակական ենթակառուցվածքների մատչելիությունը ուսումնասիրելու նպատակով, նախարարության համապատասխան վարչության մասնագետները գործուղվել են Շիրակի, Լոռու, Տավուշի և Գեղարքունիքի մարզեր և քաղաքային համայնքներ:

Ամփոփելով դիտարկման արդյունքները, արձանագրվել է, որ մարզերի քաղաքային համայնքներում քաղաքապետարանների շենքերը, փողոցների երթևեկելի և հետիոտն գոտիները, մայթերը, սոցիալական ենթակառուցվածքները՝ բուժական, կրթական, մշակութային և այլ ծառայություններ տրամադրող կազմակերպությունների շինությունները, հիմնականում հարմարեցված չեն հաշմանդամություն ունեցող անձանց տեղաշարժման և այլ ծառայություններից օգտվելու համար: Չկան հարմարեցված հասարակական հանգստի վայրեր, սպորտային և մանկական

խաղահրապարակներ: Որոշ դեպքերում հարմարեցման նպատակով կատարված աշխատանքները չեն համապատասխանում գործող ստանդարտներին: Թույլ է շահագրգիռ գերատեսչությունների և կազմակերպությունների ուշադրության կենտրոնացումը համայնքում բնակվող հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրներին և դրանց արդյունավետ լուծմանը:



## Ոլորտը կարգավորող իրավական ակտերի ցանկը

- 2006թ. «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիան Հայաստանի Հանրապետությունում վավերացվել է 2010 թվականի մայիսի 17-ին և ուժի մեջ է մտել 2010թ. հոկտեմբերի 22-ին:
- 1993թ. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունած «Հաշմանդամներին հավասար հնարավորություններ ապահովելու համար ստանդարտ կանոններ»:
- «Վերանայված եվրոպական սոցիալական խարտիա» 1996թ. /Եվրախորհուրդ/:
- ԱՊՀ երկրների ղեկավարների միջև 1993թ. մարտի 12-ին կնքված «Հայրենական Մեծ պատերազմի մասնակիցների և նրանց հավասարեցված անձանց, հաշմանդամների և նրանց հավասարեցված անձանց արտոնյալ երթևեկության իրավունքների փոխադարձ ճանաչման մասին» համաձայնագիր:
- 1994թ. ապրիլի 15-ին կնքված «Հայրենական Մեծ պատերազմի մասնակիցների և հաշմանդամների, ինչպես նաև այլ պետություններում մարտական գործողությունների մասնակիցների, զոհված զինծառայողների ընտանիքների արտոնությունների և երաշխիքների փոխադարձ ճանաչման մասին» համաձայնագիր:
- «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենք (1993թ.):
- «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենք (2005թ.):
- «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենք:
- «Հայրենական Մեծ պատերազմի վետերանների մասին» ՀՀ օրենք:
- «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենք:
- «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենք:
- «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենք (2005թ.):
- «Հաշմանդամների սոցիալական պաշտպանության 2006-2015 թվականների ռազմավարություն» 2005թ. նոյեմբերի 3-ի ՀՀ կառավարության նիստի N 44 արձանագրություն:
- ՀՀ կառավարության 1997թ. նոյեմբերի 4-ի «Միայնակ տարեցների և հաշմանդամների տնային պայմաններում սպասարկումը բարելավելու ծրագիրը հաստատելու մասին» N 485 որոշում:
- ՀՀ կառավարության 2006թ. մարտի 2-ի «Բժշկասոցիալական փորձաքննության իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 276-Ն որոշում:
- ՀՀ կառավարության 2007թ. ապրիլի 12-ի «Պրոթեզաօրթոպեդիկ պարագաների, վերականգնման տեխնիկական և այլ օժանդակ միջոցների տրամադրման կարգը պրոթեզաօրթոպեդիկ պարագաների, վերականգնման տեխնիկական և այլ օժանդակ, միջոցների օգտագործման ժամկետները հաստատելու և ՀՀ կառավարության 2003թ. դեկտեմբերի 24-ի N1780-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 453-Ն որոշում:
- ՀՀ կառավարության 2013 թվականի հունվարի 10-ի թիվ 20-Ն և 2013 թվականի փետրվարի 14-ի թիվ 121-Ն որոշումները:
- ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 7-ի «Ծեր և հաշմանդամ քաղաքացիներին խնամքի տրամադրման կարգն ու ծեր և հաշմանդամ քաղաքացիներին խնամքի տրամադրումը մերժելու հիմք հանդիսացող հիվանդությունների ցանկը հաստատելու մասին» N 1874 որոշում:
- ՀՀ կառավարության 2007թ. մայիսի 31-ի «Ծերերի և հաշմանդամների խնամքի և սոցիալական սպասարկման նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» N 730-Ն որոշում:
- ՀՀ կառավարության 2007թ. հունվարի 18-ի «Ծեր և հաշմանդամ քաղաքացիներին խնամքի և սպասարկման կազմակերպման լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» N 143-Ն որոշում:

- ՀՀ կառավարության "Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 28-ի N 1067-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» 2008 թվականի հունիսի 26-ի N 644-Ն որոշում:
- ՀՀ կառավարության «Հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի համար սոցիալական, տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների մատչելիության ապահովման կարգը հաստատելու մասին» 2006 թվականի փետրվարի 16-ի N 392-Ն որոշում:
- ՀՀ վարչապետի «Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողով ստեղծելու, ազգային հանձնաժողովի աշխատակարգն ու անհատական կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2006 թվականի հոկտեմբերի 10-ի N 747-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 2008 թվականի փետրվարի 25-ի N 98-Ն որոշում:
- ՀՀ քաղաքաշինության նախարարի» ՀՀՇՆ IV-11.07.01-2006 /ՄՄՆ 3.02-05-2003/ «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար» շինարարական նորմերի հաստատման մասին» 2006 թվականի նոյեմբերի 10-ի N 253-Ն հրաման: